

չին վրայ։ Նորայր և Նուպարեան իրենց բառարաններուն մէջ «հնդիկ եզ» կը կոչեն զայն։ Յաւալի է. որ Յովհաննէս Թիւթիւնճի անասնապահութեան վրայ ոչ մէկ խօսք կ'ընէ։

Ագոնց կը հաստատէ, թէ բացի ուղտերէ, ձիերէ, հասարակ արջառներէ, այծերէ և ոչխարներէ (դժակաւոր), Հապէշիստան ունի սեփական կենդանիներ, ինչպէս գոմէշի տեսակ մը «սարապայման յաղքանդամ եւ ստուար եւ կասաղի»։ Կան մանր արջառներ, որոնք արագընթաց են և կը գործածուին իբր գրաստ՝ բռն տանելու. ջորին՝ աւելի յարգի էր երկիրին մէջ (էջ 525)։

Վայրի անասուններէն կը յիշէ եղջերուն, այծեամբ, վարազը, գայլը, արջը և այլ ամենի գազաններ, ինչպէս վագր, ընձառիւծ, յովազ, առիւծ, բորենի և տեսակ մը խառնուրդ գազան. ծնեալ բորենիէն և առիւծէն, զոր քորօքօտա կամ քորքուտա կը կոչեն և մեծ թուով փիղեր, որոնք երամով կը շրջին, և ընձուղտ։ Կը յիշէ նաև միեղջերուն և զանազան տեսակ կապիկներ (նոյն)։

Ագոնց կը խօսի նաև անասունի մը վրայ, զոր ինք կը կոչէ «ջրային երիվար», յունարէնը՝ իբոբոսամոս և կը նկարագրէ զայն. իր նկարագրութենէն իսկ հետեւեցնելով՝ որոշ է, թէ ոնգեղջիւրն է։

Նոյնպէս կը խօսի նորատեսակ կենդանիի մը մասին, զոր Հապէշները անկուէպ կը կոչեն եղեր և որ տեսակ մը ջրային կովատիւ կամ մողէս է կատուի մեծութեամբ։ Անոր դպողները ցրտութիւն կ'զգան և սաստիկ դող՝ զայն իբր ջերմի դարման կը գործածեն եղեր Հապէշները (տես Ագոնց, Ափրիկէ, 525-526)։ Այս տեղեկութեան ճշդութիւնը երաշխաւորելու ի վիճակի չեմ սակայն։